



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

--- հուլիսի 2017 թվականի №----Ա
ք. Երևան

**«ԻՆՏԵՐ Ա.Կ.Վ.Ա.» ՄԱՀՄԱՆԱՓՈՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ
«ԿՈՌՆԵՎ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
(ՀՁՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԻՆՏԵՐ Ա.Կ.Վ.Ա.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հուլիսի 4-ի հայտը և հուլիսի 11-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԻՆՏԵՐ Ա.Կ.Վ.Ա.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Կոռունկ» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիփանիկ համայնքի վարչական տարածքում) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2038 թվականի հուլիսի 19-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2018 թվականի հուլիսի 19-ը:
2. Հաստատել «ԻՆՏԵՐ Ա.Կ.Վ.Ա.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կոռունկ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ